

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

Աստվածաբանության ֆակուլտետի խորհրդի 2015թ. Հունվար 15-ի նիստի

Ներկա էին՝ պ.գ.թ., դոց. Անուշավան եպս. Ժամկոչյան (խորհրդի նախագահ), **դոցենտ Ա. Յ. Բալյան** (խորհրդի քարտուղար), **դոցենտ Ա. Է. Հովհաննիսյան**, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ **Ռ. Հ. Վարդանյան**, գիտ. դոկտ., պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Յ. Գ. Ավետիսյան**, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Լ. Ա. Սարգսյան**, ասիստենտ Վ.Վ. Խաչատրյան, փ.գ.թ. դոց. **Պ. Բարսեղյան**, պ.գ.դ. **Ս. Ս. Մկրտչյան**, Հայ եկեղ. պատմ և եկեղեց. ամբ. պատմ. գիտ. դոկտ. Ա. Ս. Սահակյան, փ.գ.թ. դոց. **Գ. Ա. Սարգսյան**, դսխ. **Գ. Հ. Ղուլչյան**, **ՈՒԽ Նախագահ Ն. Հայրապետյան**, **ՈՒԳԸ նախագահ Ս. Մելքոնյան**:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հեռակա ասպիրանտների գիտական թեմաների ու ղեկավարների հաստատման հարցը
2. ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի «Հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության» ամբիոնի դասախոս Աշոտ Մանուչարյանի «Վիճազրերը Հայաստանի քաղաքական պատմության սկզբնաղբյուրներ (IX-XIVդդ.)»-ի գրքի հրատարակության երաշխավորության հարցը
3. Աստվածաբանության ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Սարգիս Ռուբենի Մելքոնյանին 2014-15 ուստարվա 2-րդ կիսամյակում Գրիգոր Լուսավորիչի անվանական կրթաթոշակ ստանալու երաշխավորության հարցը:
4. Աստվածաբանության ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Մարիամ Հայրոյի Մարիկյանին 2014-15 ուստարվա 2-րդ կիսամյակում Վազգեն Ա կաթողիկոսի անվանական կրթաթոշակ ստանալու երաշխավորության հարցը

ԼՍԵՑԻՆ 1. –ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի 2014-15 ուստարվա «Հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության» ամբիոնի ԻԵ.00.01 Կրոնի տեսություն և պատմություն(կրոնագիտություն) մասնագիտությամբ հայցորդ՝ Հարություն Գևորգի Մելիմյանի՝ «Հայ ավետարանական եկեղեցու պատմության խնդիրներ» վերնագրով ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը (զեկ.՝ Ա. Յ. Բալյան):

Ձեկուցողը ֆակուլտետի խորհրդի քննարկմանը ներկայացրեց թեկնածուական ատենախոսական թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՐԱՅՏՎԵՑԻՆ. - պատմ. գիտ. դոկտ. Ռ. Հ. Վարդանյան, պատմ. գիտ. թեկն դոց. Ա. Է. Հովհաննիսյան, պատմ. գիտ. դոկտ. Ս. Մկրտչյան:

ՈՐՈՇԵՑԻՆ. ա) Հաստատել «Հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության» ամբիոնի ԻԵ.00.01 Կրոնի տեսություն և պատմություն(կրոնագիտություն) մասնագիտությամբ հայցորդ Հարություն Գևորգի Սելիմյանի՝ «Հայ ավետարանական եկեղեցու պատմության խնդիրներ» թեկնածուական ատենախոսության թեման,
բ) թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար նշանակել պատմ. գիտ. դոկտ., Արծրունի Սամվելի Սահակյանին:

ԼՍԵՑԻՆ.2 –ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի «Հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության» ամբիոնի դասախոս Աշոտ Մանուչարյանի «Վիճագրերը Հայաստանի քաղաքական պատմության սկզբնաղբյուրներ (IX-XIVդդ.)»-ի գրքի հրատարակության երաշխավորության հարցը (զեկ.՝ Ա. Բալյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- պ.. գ. թ. դոց. Տ. Անուշավան եպս. Ժամկոչյան, պ.գ..թ, դոց. Ա. Է. Հովհաննիսյան:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Երաշխավորել ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի Աշոտ Մանուչարյանի «Վիճագրերը Հայաստանի քաղաքական պատմության սկզբնաղբյուրներ (IX-XIVդդ.)»-ի գրքի հրատարակությունը:

ԼՍԵՑԻՆ.3 - Աստվածաբանության ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Սարգիս Ռուբենի Մելքոնյանին 2014-15 ուստարվա 2-րդ կիսամյակում Գրիգոր Լուսավորիչի անվանական կրթաթոշակ ստանալու երաշխավորության հարցը (զեկ.՝ դոց.. Ա. Բալյան):

Ձեկուցողը նշեց, որ Սարգիս Մելքոնյանը ունի բարձր առաջադիմություն, վերջին կիսամյակների ընթացքում եղել է բացարձակ գերազանցիկ, իրեն դրսևորել է իբրև պարտաճանաչ, կազմակերպչական ընդունակություններով օժտված անձնավորություն: Վայելում է ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և համակուրսեցիների վստահությունն ու սերը և արժանի է ստանալու անվանական կրթաթոշակ: Նա Աստվածաբանության ֆակուլտետի ՈՒԳԸ-

նախագահին է, մասնակցել է մի շարք միջհամալսարանական գիտաժողովների և մրցույթների:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - պ. գ. թ. դոց. Անուշավան եպս. ժամկոչյան, պրոֆ. Ռ. Վարդանյան, դոց. Ա. Բալյան:

ՈՐՈՇԵՑԻՆ— Երաշխավորել Աստվածաբանության ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Սարգիս Ռուբենի Մելքոնյանին 2014-15 ուստարվա 2-րդ կիսամյակում Գրիգոր Լուսավորիչի անվանական կրթաթոշակ ստանալու համար:

ԼՍԵՑԻՆ 4 Աստվածաբանության ֆակուլտետի մագիստրատուրաի 1-ին կուրսի ուսանողուհի Մարիամ Հայրոյի Մարիկյանին 2014-15 ուստարվա 2-րդ կիսամյակում Վազգեն Ա կաթողիկոսի անվանական կրթաթոշակ ստանալու երաշխավորության հարցը (զեկ.՝ դոց. Ա. Բալյան):

Ձեկուցողը նշեց, որ ունի բարձր առաջադիմություն, վերջին կիսամյակում բացարձակ գերազանցիկ է և արժանի է ստանալու անվանական կրթաթոշակ: Ֆակուլտետի ՈԻԽ խորհրդի անդամ է: Մասնակցել է մի շարք միջհամալսարանական գիտաժողովների և մրցույթների: Պարտաճանաչ է կազմակերպչական ընդունակություններով օժտված անձնավորություն և վայելում է ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և համակուրսեցիների վստահությունն ու սերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. - Անուշավան եպս. ժամկոչյան, պրոֆ. Ռ. Վարդանյան,, դոց. Ա. Բալյան:

ՈՐՈՇԵՑԻՆ.— Երաշխավորել Աստվածաբանության ֆակուլտետի մագիստրատուրաի 1-ին կուրսի ուսանողուհի Մարիամ Հայրոյի Մարիկյանին 2014-15 ուստարվա 2-րդ կիսամյակում Վազգեն Ա կաթողիկոսի անվանական կրթաթոշակ ստանալու համար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ պ.. գ. թ.դոց. Տ. Անուշավան եպս. ժամկոչյան

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

պ.. գ. թ.դոց Ա. Յ. Բալյան